

Կարգաբան Կարգաբանյան

ԻՍՍՐԱԷԼԻ ԿՐԹԱԿՆԵՐԻ ԿՐԹԱԿՆԵՐԻ
ԻՍՍՐԱԷԼԻ ԿՐԹԱԿՆԵՐԻ ԿՐԹԱԿՆԵՐԻ



Baruf?


հայրենիքը արեւելք,
որտեղ ինչ կար է
հայրենիքը լեռ,
տեղի արեւելք

Գ. Բարսեղյան

8/ VII 8/ 10

Հայրենիքը Հայրենիքը

ԿՆՈՎԱԿՆՈՒՅՑ
ԽԱՂԱԳՈՐԾՅՈՒՆ



Հայրենիքը
Երևան 1963

ВАЧАГАН ЛЕВОНОВИЧ ВАРДАНЯН

СМУТНЫЙ МИР
ПОЭМЫ

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айнегат), Ереван, 1963

Գ Ո Ե Մ Ն Ե Ր

Դ Յ Ո Ւ Յ Ա Ջ Ն Ա Կ Ա Ն

Քաջաբար մեռան՝ որք մեռանն...
Ղազար Փարպեցի

I

Ա կանչա դրած մայր հողին ահա
Ոտնաձայներն եմ լսում դարերի,
— Ելնենք, — լսում եմ մի ձայն առնական, —
Բավ մնանք այսպես պարսիկին գերի,
Բավ լռենք ձմռան գետի պես հլու,
Չորեկ են նորա կրծքին մեր երկրի,
Զանգերն են ջարդում մեր եկեղեցու,
Մեր գինուց հարբած՝ հայհոյում են մեզ,
Տալիս մեր հացից մեզ ողորմություն...

Եվ այդ առնական ձայնը հայորդու
Դառնում է ցուանք սուրսայր նիզակի
Ու սրի շառաշ,
Ու երգ է դառնում՝ կանչող միշտ առաջ.
— Հոգյակիս համբույր ճամփեմ,
Խաբրիկ մի, լավ լուր ճամփեմ
Ու ասեմ, թե ահ չունեմ,
Մեռնեմ էլ՝ ես մահ չունեմ,
Զինվորն եմ ես հայրենյաց,
Իմ ձիուց լավ գահ չունեմ...

Եվ այդ զինվորը գերվել է ահա,
Գերվել են իր հետ հայեր տասներկու:
Ականջս դրած մայր հողին մի պահ՝
Տնքոցն եմ լսում նրանց սրտերի.
Այդ ինչպե՞ս եղավ, որ ընկան գերի,
Ձեռք ու ոտքերը ամուր կապկպած՝
էլ սուր շեն հանի հանուն հայրենյաց...

II

Կանգնած են նրանք տխուր ու անձայն
Վրանի առաջ պարսից իշխանի:
Երկյուղը ի՞նչ էր՝ սա դեռ չգիտեր,
Իր քառասնամյա սրտում երկաթե
Չէր զգացել այդ,
Ու դրա համար բանակում պարսից
Բոլորը նրան կոչել են «Փոլադ»,
Այսինքն՝ երկաթի:
Իսկ այսօր մարդ է նա սովորական,
Այսօր նա ապրեց երկյուղն առաջին:
Գերված տասներկու այս հայերը ի՞նչ,
Թեկուզ հայոց ողջ այրուծին ջնջի,
Սիրտն էլի պիտի մեկի դեմ մխա՝
Այս մի զինվորի...
Մաղձ կար և հրդեհ աչքերում նրա,
Կար ուժ մի ահեղ, մի դև կար նստած,
Սրից ահավոր, սրից ամեհի
Այդ բոլոր աչքերի շանթերն իջան ցած,
Եվ ինքն ընկրկեց առաջին անգամ,
Կար մի խոր ճեղքվածք լանջպահ զրահին,
Մի խոր ճեղքվածք էլ սրտի մեջ՝ ահից...
Եզո՞ւկ, փողփողաց սուր մի գողեգող,
Հատեց բազուկը հաղթող հայորդու,
Եվ ինքը չընկավ այդ բազկից անդող
Կովի դաշտի մեջ, ընկերների հետ,
Մնաց, որ այսպես տանջվի այսուհետ,
Որ է՛լ երկաթ չէ...

Իշխանի ձեռքն ահագին
Թուջ է ասես ծանրագին,
Ու այդ ձեռքում մի սուր քար՝
Խփում է նա հայորդուն,
Բայց ոչ գլխին, այլ կրծքին:
Կարմիր արյունն է հորդում
Ինչպես բոցը քուրայից,
Ու քրտինքն է ծորում ցած
Լայն ճակատի վրայից,
Ասես արձիճ է հալած:
Մի ձեռք չկա այն սրբի...
Սակայն քարից առավել
Խոսքն է խոցում թշնամու,
Տաք արձիճից ավելի
Այրում սիրտը սև բոցում.
— Ծունկի կզաս, Ահրիման,
Դեռ կերկնչես իմ առաջ,
Հայն հերոս է, երբ չիք մահ,
Սակայն մահվան հանդիման
Գեղնած տերևն ի միտ բեր,
Որ դողում է տարուբեր:
Բայց «Ահրիման» — հայորդին
Աչքերն անգամ չի թարթում,
Ու չի լսվում տնքոցը
Անհավասար ճյղ մարտում,
Երբ մի ձեռքը կտրված,
Մյուսն էլ ահա պինդ կապած՝
Լոկ բռնցքվում է իզուր:
Ոչ, բռունցքից ավելի
Այս լուսթյունն է ազդու,
Իսկ աչքերը հրով լի,
Այս աչքերը... օ, ինչպե՞ս
Կուզեր ոսոխն հանգցնել:
Եվ նա նիզակն է առնում...

— Չէ, —ասում է հուսահատ,—

Այս աչքերը թող մնան,
Երբ դողա սիրտն ահալի՝
Դառնան ահի հայելի:
Եվ նիզակը սրասայր
Այտն է ճեղքում հայորդու,
Խրվում արնոտ հողի մեջ:
Կրկին՝ վառվում են անշեջ
Երկու աչքեր արծվենի,
Բայց շուրթերը դալկացող
Մահն են գուժում դյուցազնի,
Եվ զեփյուռը հայրենի
Վերջին անգամ է շոյում
Ճակատը վեհ ու ազնիվ...
Ի՞նչ, նա մեռնի՞ շերկյուղած,
Սիրտն է դողում թշնամու,
Շուտ, շուտ, ինչպե՞ս, ի՞նչ անի,
Էլ ճար չկա, ո՞նց կուտրի
Կամքն այս գոռոզ հայորդու...

IV

— Ափսոս է մեռնես, ջահել ես դեռ շատ,—
Ասում է քաջին նա անկեղծաբար,—
Լոկ ծունկի արի դու իմ հանդիման,
Եվ իշխանական խոսքս կառնեմ ետ,
Ի բաց կարձակեմ, չեմ տա քեզ մահվան,
Գնա, քեֆ արա աղջիկների հետ:
Ասում է աչդպես, և հայորդու դեմ
Փռվում է իրենց գյուղը հեռավոր,
Մուխ է բարձրանում երգիկից իրենց,
Կապույտ, խաղաղ ծուխ, ինչպես վեր նետված
Մի երկար՝ պարան, ոչոր ու մուրթ:
Մարերն են զարթնում մշուշի միջից,
Լաջվարդ երկինքը նրանց շուրջսրտը

Իր կապույտ, կապույտ երազն է փռում...
Ինքը իր ակոս-տողերն է գրում
Իրենց արտի մեջ, ձորի պուռնկի՛ն,
Մարավ է այնպես ու ձորի միջից
Իր սեր-աղջիկն է ելնում՝ կուժն ուսած:
— Լերդիկս կերի, քչիկ մի ջուր տա՛ա:
Ու կժի բերանն իր բերնին դրած՝
Խմում է, խմում ու շի հագենում,
Ախ, այս ջուրը ի՞նչ, սեր պիտի խմեր
Հոգյակի բերանն իր բերնին դրած...
— Պուտ մի թողնեիր իմ ջրեն, վիշապ,
Ողջը խմեցիր, հորս ի՞նչ մնաց,
Նրա համար էր ջրիկս բերած:
— Ես այս ափն ունեմ, հերիկդ ուրիշ ափ,
Ինձ համա՞ր, ասա, շեղեցիր՝ ճամփադ:
Քայց սեր-աղջիկը չի պատասխանում,
Միծաղն է հորդում,
Քնքուշ բերանից թափվում աշխարհին:
Ախ, այդ բերանը դեռ չհամբուրած՝
Գնաց հոգյակը արտերի միջով,
Քայց մնաց կուժը՝ լիքը պաղ ջրով,
Մնաց օդի մեջ, և ինքը ահա
Խմում է, խմում ու շի հագենում,
Մեխել են գետնին ու վեր շի կենում,
Չարն է իր դիմաց, ի՞նչ է կամենում,
Հա՛, որ ծունկի գա ինքը նրա դեմ,
Քայց ախրը ինչո՞ւ՝ նրանք ան եկել
Եվ ոչ թե ինքը՝ երկիրն ուրիշի,
Նրանք ուժեղ են և ուժը նոցա
Այն է, որ խլեն լավը ուրիշից,
Այն է, որ դարձնեն ուրիշին ստրուկ,
Այսպես ստիպեն, որ դու ծունկի գաս,
Իրենցը կրկնես ու քոնը շասես,
Քոնը մոռանա՛ս...
Եվ ընդհատվում են մտքերը նրա,
Արյունն է միայն, որ հոսում է դեռ,

Նորից կուժն ահա լիքը պաղ ջրով,
Դրել բերանին՝ խմում է, խմում,
Քանի խմում է՝ այնքան ծարավում։
Նորից գալիս է աղջիկը սիրած,
Եզներն են փնչում, չէ, ո՛ւր են եզներ,
Ականջների մեջ ինչ որ բան դժժաց-
Ո՛ւր էր, թե նորից հոգյակին տեսներ,
Մտքի խաբկանք էր— եկավ ու գնաց։
Դժվար է մեռնել դեռ շհամբուրած,
Չտեսնել, չզգալ սար, ծաղիկ ու խոտ,
Լորեր՝ արտի մեջ, ծիծղուն առավոտ-
Ոչինչն է շիրմում իշխում առհավետ,
Ե՛վ հող հայրենի, և՛ սեր, և՛ երազ
Այդ ոչնչի մեջ ցնդում են անհետ։
Դժվար է... Բայց թե մեռնելն հեշտ լինեք,
Ո՛ր տկարն ասես հերոս չէր դառնա,
Այնինչ հերոսը մեկն է, միայն նա,
Ով իր կորստի ցավից չի նվա,
Թեկուզ կորցնի ամենաթանկը՝
Ընկերոջ բարև, փառքի պերճ խոստում,
Սեր, երկինք, հույսեր... մի խոսքով՝ կյանքը։

V

— Հայ, բավ է լուս, — Փոլադն է փնչում, —
Շուրթեր չե՞ս ուզում, տաք, փափլիկ շուրթեր։
— Ուզում եմ չքվեք դուք աշխարհից մեր...
է՛ր եկաք հողը դուք մեր պապերի,
Զգույթ՝ այսպես ծունկ չէիր իջնի,
Որ պարտության խոսք լսես իմ բերնից։
Ու ծառս է լինում Փոլադը խայթից,
Այս անգամ նիզակն առնում է արդեն
Իր գերու բմբուս սիրտը խրելու,
Շամփրելու նրա աչքերն հրեզեն,
Որ դեռ գույգ բոց են, գույգ սուր ահազգուս
— Տեր իմ, քո դուզն եմ, լսիր եզկելուս,—

Դիմում է մեկը աղվեսի հանգույն,—
Զուր չեն ճերմակել իմ հերքն ու մորուս,
Մի բան էլ ես եմ սովորել կյանքում։
Ախրը մարմինն ես տանջում դու նրա,
Բայց հարկ է տանջել հոգին զորավոր,
Սպանիր հոգին, էլ չի դիմանա
Տկար մարմինը ցավերին այդ դոռ-
Սպանիր հայոց այս գերյալներին,
Մրանք են այդպես պահում իր հոգին,
Իրենց աչքերով ուժ տալիս նրան։
Սուրն է շառաշում, և քարի նման
Տաան՝րկու զուլս թմփում են հոգին,
Լոփկ խոսում է սարսափ մի դեղին
Մարմրոզ դալուկ դեմքին հայրդու,
Ահով լի երկու անդունդներ մի պահ
Երկու աչքեր են հառվում տանջողին,
Քրքջում է սա, խենթ ու դիվային-
— Փոլադ անունը չի սազի հային,
Ահա ոռջեն իմ ծոնկի եկար դու։
— Զէ, նենդ,— հնչում է ասես ջրհորից,—
Ես ծունկի չեկա, ես նույնն եմ նորից,
Բայց դու... է՛լ այն չես, դու ստոր ես հույժ,
Դու կհնարես պատմություններ սուտ։
Ասոված իմ, մի հայ աստղիկ իսկ չկա,
Որ տեսնի մահս, մերոնց մոտ պատմի,
Նա ծունկի չեկավ, ասի իմ մասին,
Կովեք նրա պես... հողը նախրյան...
Լո՛ւր... լո՛ւր... Ու մեռավ հերոս հայրդին։
Իսկ նա, որ մնաց, որ է՛լ երկաթ չէր,
— Նա էր Փոլադը,— ահեղ մոնչաց,—
Ես չէի կարող հանց նա առնացի
Մահվան գրկի մեջ մահից չղողալ,
Ես մենության մեջ չէի մտածի,
Որ մահով անգամ մերոնց չեմ օգնի։
Հե՛յ, փշեք փողը մեր ծիրանագույն
Ի փառս նրա՝ ինձ հաղթող հայի։

Ականջս դրած մայր հողին ահա
 Պղնձե ձայնն եմ լսում այդ փողի,
 Լսում եմ երգը, որ երգում էր նա,
 Այդ երգով հիմա ուրիշն է ճամփում
 Հեռու հողակիրն «խաբրիկ մի, լավ լուր»:
 Հայոց այրուձին՝ թշնամուն հաղթած,
 Անցնում սարեսար, բլուրից բլուր,
 Տանում էր իր հետ մի ձեռք կտրված,
 Մի սուր էր տանում, սուրը Վարդանանց,
 Որի դաստակը այդ ձեռքն էր բռնում:
 Պատյան շուներ նա ու այդպես դարեր
 Չմտավ պատյան:
 Լսում եմ նաև, որ պատմիչը ծեր
 Ահեղ մարտերն էր պատմում դարերին,
 Դժգույն շուրթերը մրմնջում էին՝
 Քաջաբար մեռան բազում շինական,
 Ուռչում էր սրտում մի հպարտութուն,
 Ձեռքը գրում էր՝ քաջաբար մեռան..

ՎԵՐԱԴԱՐՁ

I

Ինչքան շատ բան է մարդուն պատահում
 Եվ պատահում է օրը ցերեկով,
 Որ դեղնափորիկ ճնճղուկի նման
 Խաբում է մուսան, հտեկից տանում,
 Էն է՝ կարծում ես բռնեցիր ահա,
 Բայց նա, պո՛ւկ, թոավ դիմացի ճյուղքին,
 Կանգնել ծլվլում, կանչում է կրկին,
 Թե խելքդ տեղն է՝ վրա մի գնա,
 Թե խելքդ տեղն է՝ թող այդ ճնճղուկին,
 Քո գործը արա ուժիդ սահմանում:
 Բայց ուրիշ ի՞նչ գործ անի Խնդունին,
 Անցել է կողքից քանի բուհերի
 Ու համալսարան մտել հրճվագին,
 Հենց ֆակուլտետը բանասիրական,
 Որ երգեր կարդա ու երգեր գրի:
 Եվ կարդացել է, գրել է երգեր
 Վարդը հինգ տարի՝ ավարտել մինչև,
 Ախ, շատ խորքերն է քաշել անտառի
 Այդ դեղնափորիկ ճնճղուկը նրան:
 Իզուր բնկերներն այսօր վերստին
 — Է՛լ չ կրակ ես, Խնդունի,— ասին,—
 Հետդ խոսելիս սիրտ է ջերմանում,
 Բայց քո նոր գրած այս տաղարանում
 Մոխիր կա միայն և կայծեր շնչին:

Գուրանասուէր՞ զ՞՞ եւ, երբ ամբողջովին
Խորասուզվում ես այն գրքերի մեջ,
Որ «տեխնիկական» անունն են կրում:
Գուրաններն ես արձիճից կոտմ
Եվ ալյումինից՝ կազինկոտրիչներ,
Ես վաղուց էի ուզում քեզ ասել,
Որ զուր ես եկել ֆակուլտետը մեր:
էի, միամիտներ, ո՞նց չեն հասկանում,
Որ ով նայել է սիրուն մուսային,
Նրան հեշտութեամբ մտքից չի հանում:
Ու նա գրում է, թող գրի այդպես,
Ո՞վ ասես կյանքում գրել չի փորձել,
Ի՞նչ արած, եթե բոստանում թափված
Հերվա սերմերից արեւածաղիկի
Քշերն են ծլում, հատ ու կենտ միայն:
Ի՞նչ գիտես, զուցե նա էլ կծաղկի,
Իզուր չեն իրավ կրակներն այսքան,
Եվ այն, ինչ այսպես երգվում է սրտում
Ու սրտում՝ լուծ,
Թերևս երգվի նաև աշխարհում:
Ներիր, ընթերցող, եթե քեզ թվաց,
Թե իմ ձայնի մեջ շեշտ կար հեզմանքի-
Ես ուզում էի պարզապես ասել,
Որ, այո, նրա այն տաղարանում
Մոխիր կար միայն և կայծեր շնչին:
Իսկ եթե թվաց հեզում եմ նրան,
Ուրեմն այն չեմ ասել քո սրտին,
Մի ախրութեան է իջնում իմ հոգուն,
Որ փտած սերմ եմ արեւածաղիկի,
Իմ սրտի միջից չափաի ծագի
Արեւ-ծաղիկն այդ՝ կեղևը սրտուած:
Ինչպե՞ս դմայված նա առավոտյան
Ողջուն է տալիս ծագող արևին՝
Մի ամբողջ գիշեր կարոտով լոխի
Սպասած նրա տաքշող բարեին:
Եվ հետո, մինչև մայր մտնի արփին

Գլխիկն համընթաց դարձնում է դեպ նա,
Երբեք չի շեղվում, միշտ այն է անում,
Ինչ կենդանու մոտ կկոշվեր բնազդ,
Իսկ այստեղ ահա կհշլվում է տաղանդ,
Մի բառ, մի պատկեր, մի տաք թրթուր,
Եվ զգում ես, որ նա այն է ասել,
Ինչ որ ուզում էր:
Ախ, քշերին է այդ ձիրքը նորված.
Թող այդ քշերից լինեք ենդունին
Ու նրա մասին երբեք չասեին,
Թե ով նայել է սիրուն մուսային,
Նրան հեշտութեամբ մտքից չի հանում:

II

Իրարու թիկնած կանաչ բլուրներ,
Բարդիներ՝ ելնող նրանց լանջն ի վեր
Եվ կատարներին կանգնած բարդիներ,
Որ չեն հանդուրժում հարթ միջակութունն,
Իրենց սլացքով ասել են ձգտում,
Թե բլուրներ չեն խեղճ ու հասարակ,
Սարե՛ր են սրանք:
Բայց բլուրն էլի բլուր է մնում,
Թեկուզ կատարին ամենաբարձր,
Բարդիներից վեր կա մի աշտարակ:
Շենքեր կան թաղված հորդուն կանաչում,
Բարդիների մեջ, այստեղ ու այնտեղ,
Եվ գերեզմանոց՝ դիմացի լանջում:
Տարիներ առաջ լոկ մոմերն էին
Այստեղ պլպլում մուսլ գիշերին,
Մեկ էլ՝ գալլերի աչքերը ազահ:
Հիմա լույսեր են մութը թրատում՝
Սրի պես ելած պատուհաններից:
Քաղաքն աճում է և օրը օրին
Գերեզմանոցն է խույս տալիս, փախչում,
Այդպես էլ կյանքն է հալածում մահին

Եվ գայլի զարհուր ոռնոցի տեղակ
Մարդկային զվարթ ձայներով հնչում:
Այստեղ է ապրում պոետ հնդունին:
Բաց լուսամուտից սենյակն է խուժում,
Քափվում սրտի մեջ տխուր մեղեդին,
Հողին են հանձնում ինչ-որ մեկի դին,
Ուրեմն մահը շատ էլ անզոր չէ,
Իր սուտ փախուստում
Կա մի դիվային խորամանկություն:
Մեռյալը հիմա ոչինչ չի զգում,
Նա եղել էր, կար, այլևս չկա,
Կամ կա, ինչպես որ փրփուրն անզգա:
Իսկ նրանք, նրանք, որ մահն են սզում,
Ախ, նրանց ինչպե՞ս կմխիթարես,
Երենկ հորինես մի երգ այնպիսի,
Որ սզավորը երբ որ ընթերցի
Վիշտ, մահ ու կսկիծ փոխվեն երազի:
Չկա, չի եղել այդպիսի մի երգ,
հնդունին գիտե, որ ինքն էլ, ավա՞ղ,
Այն չի ստեղծի:
Գիտե, բայց էլի զրիչն է առել,
Փուլթ չէ, թող երգն իր գեթ պակսեցնի
Արցունքի ծովը մի կաթիլի շափ,
Գեթ մի «ախ» սրտի խորքում հանդցնի:
Բայց իր սրտում է մի «ախ» ծովանում,
Ու մահվան մասին խոհերը անհուն
Դազադի նման ճնշում են հոգին:
Երևի երգը չզնգաց կրկին,
Նորից սրտի՛ մեջ երգվեց ու հանգավ:
Այսպես է. երբ որ չի տեսնում հոգին
Իր գեմ բարձունքների վեր մազլցելու,
Մահն է երևում իր հորիզոնում,
Չէ, ի՞նչ հորիզոն, հենց ոտքերի տակ,
Ուր որ է՝ կընկնի անզունդն անհատակ,
Օգնեցեք, հե՛յ, հե՛յ, ի՞նչ եր վարանում:
Բայց ինչպե՞ս օգնես, Երանի լիներ

Նա էլ սնապարծ այն պոետներից,
Որ երկու տող են մի կերպ կապկպում,
Սակայն հավատում, որ գրող են մեծ:
հնդունին սթափ՝ իրեն չի խաբում,
Գիտե, որ երգն իր նորից շտապվեց:
Այս հուզարկավոր մարդիկ գլխիկոր
Քե կարգան իր այս գրածը մի օր,
Ոչ թե գեթ՝ մի «ախ» կբաշեն պակաս,
Այլ մեկն ավելի՝ որ մի հնդունի
Ուզում է իրենց օգնել վշտի մեջ,
Օգնության կարիք, սակայն, ինքն ունի:
— Տեք, ի գիրկդ գա, սփոփիր նրան,—
Քաղման թափորից լսվում է մի ձայն:
Պարզ է, ոգում է այդպես քահանան,
Որին կանչել է մեկն հավատացյալ,
Որ սա մեռածին «ի տերն» ուղարկի:
Իսկ այդ մեռածը շատ-շատ կզանա
Իր թմբին բուսած թղաչափ մի խոտ,
Այդ խոտի շափ էլ կձգվի երկինք:
հնդունին երկար խորհում է թախժոտ,
Որ ինքն էլ խոտ է անհայտ, անանուն,
Այդ հանգուցյալից բնավ չշոկվող:
Ջոկված են ահա բարդիները սեգ,
Նրանք ասես թե պոետներ են մեծ՝
Ամեն մեկը իր սոսափն ունեցող,
Իր բարձրությունը, տերևները իր:
Իսկ աշտարակը, բարձր բոլորից
Եվ երևացող բոլոր կողմերից,
Այդ ո՞ր պոետն է, ո՞ր երանելին...
— Տեք, ի գիրկդ գա, սփոփիր նրան,—
Նորից ոգում է նույնը քահանան:
Դե ուրիշ էլ ո՞վ, նույն ինքը թատված,
Նույն ինքը Տերն է աշտարակը այն,
Որ երևում է բոլոր կողմերից:
Աւ մոլեգնում է հնդունին հոգում...

Որտեղի՞ց եկան այս մտքերն հանկարծ,
 Ծանրացան սրտին որպես մաղձ, խոկում,
 «Դու բախտավոր ես, արարիչ աստված,
 Մի կիսատ-պոռատ աշխարհ երկնեցիր
 Կվ չեն մոռանում մարդիկ քո մասին:
 Ինչ ստեղծեցիր քո կամբով վերին
 Ոչ մի քննադատ չնշեց թերին,
 Եվ... ընդունեցին:
 Քո աշխարհի մեջ այդ կիսատ-պոռատ
 Մարդիկ դարեդար տանջեցին իրար
 Ու դու լուեցիր,
 Ոչ ոք չհարցրեց ինչու՞ էս լուում,
 Քեզ տեղ տվեցին ոչ թե դժոխքում,
 Ամենից ցածր... այլ երկնում անձիր,
 Ուր որ չէր եղել ոչ մի հողածին,
 Ուր կարող էիր դու հանգիստ քալել,
 Առանց մի վայրկյան մտահոգվելու:
 Որ քո ոտքերը կրնկնեն արյան մեջ:
 Եվ իրենք անվերջ արյուն թափեցին,
 Ոչ մի զարկուղ ձեռք դու չբռնեցիր:
 Իսկ հիմա, աստված, սիրտ ունես՝ նայիք,
 Մահվան ինչպիսի զենք հնարեցին.
 Բայց ինչպե՞ս նայես, դու վաղուց չկաս:
 Մահից հետո էլ դու բախտավոր ես,
 Արարիչ անդո՞, շատուզված հզոր,
 Քո անունով են մարդիկ մինչ այսօր
 Լավ երգը կոչում—քո՝ աստվածային,
 Կոչում լավ գինին,
 Կնոջը անգին.
 Ամեն, ամեն բան, ինչ բարձր է՝ վերին:
 Նույնիսկ կայցրին հրանոթներին
 Քո այդ անունը,
 Թե հրետանին աստվածն է կովի:
 Իսկ ևս, որ ծնվել, ապրում եմ ու կամ

Որպես գոյություն մի շոշափելի,
 Չեմ կարողանում մի մասն ունենալ,
 Անսահմաներորդ մի մասն անունիդ,
 Որ իմ տողերից հուզվեր գեթ մի սիրտ»:
 Այնպես հատակ է տեսնում ինդունին
 Իր այս խոհերը չզբված երգում,
 Որ թվում է, թե հենց գրիչն առնի
 Երգը ինքն իրեն կհոսի վարար.
 Ինչ գրիչն էլի սահում է փութով,
 Բայց կարծես ոչ թե թղթի վրայով,
 Այլ բարակ սառցի,
 Իր այրող հույզերն ընկնում են հերթով
 Ու սառցի վրա անշուշտ մարում.
 Երևի այն է ձիրքը աշխարհում,
 Ինչ սիրտը զգա՝ գրիչն արծաթի
 Նույնը տողերում...
 Եթե այդպես է՝ ինքը ձիրք չունի...
 «Դու բանաստեղծ ես, երբ ամբողջովին
 Խորասուզվում ես այն գրքերի մեջ,
 Որ «տեխնիկական» անունն են կրում:
 Դու արձաններ ես արձիճից կոում,
 Եվ այլումինից՝ կաղինկոտրիչներ,
 Ես վաղուց էի ուզում քեզ ասել,
 Դր դուր ես եկել ֆակուլտետը մեր»:

IV.

Բայց նա չգնաց դեպի գործարան,
 Թեև քալում է արդ գործարանում,
 Ով որ նայել է սիրուն մուսային,
 Նրան հեշտությամբ մտքից չի հանում.
 Անցնում է տղան հաստոցից-հաստոց
 Միտքը գրգռված, հոգին ալեկոծ
 Եվ պատկերներ է ուզեղում դաշում
 Վաղվա գրելիք ակնարկի համար:
 Այդ ակնարկի մեջ պողպատն է շաշում,

Ինչպես որ հիմա իր ականջներում:
Այստեղ էլ ահա կրակ է ու բոց,
Երկաթն է ձուլվում, որ դետալ դառնա:
Շող է, մտել է ասես Սահարա,
Քրտինքն է պակում ճակատի վրա:
Բայց նա՝ անհողողող, նա չի ընկրկում.
Ինչպե՞ս ընկրկի,
Երբ որ ձուլողը այս ամբամկան
Այսպես անվախ է մոտենում հրին,
Նրա բաց կրծքին, տես, մազեր չկան,
Այրվել են քիչ-քիչ, շեն աճել կրկին,
Խարկած հողի մեջ ընկած սերմի պես:
Ով ձուլող ընկեր, դու մի զարմանա,
Որ մոտիկ գնաց քո հնոցին նա
Քեզնից ավելի,
Չի ուզում խորհես իր մասին հիմա,
Որ ինքը իբր այս մեծ աշխարհում
Գյուրիներն է ընտրել իր համար ճամփա:
Թող թարթիչները խանձվեն կրակից,
Շիկացած օդից թոքերը ուռչեն,
Ինքը այս տապից նահանջողը չէ,
Մի՛ կարծիր իրեն փխրուն թղթակից:
Այդպես մի՛ ժպտա, ոչ, մի՛ կասկածիր,
Այդպես մի՛ հեզնիր, ախր հասկացիր,
Քո հնոցից չէ, որ սիրտը գողաց
Ու եկած ճամփով նա ետ-ետ գնաց:
Դու, ձուլող ընկեր, քո կրակն ունես,
Երկաթ ես հալում, կապար ու շուգուն,
Դու ստեղծում ես քոնր այս կյանքում,
Իսկ իր երգերում, ախ, ճիշտ ասացին,
Մոխիր կա միայն և կալծեր շնչին...
Նա այդ մտածեց ու ամոթահար
Հնոցի մոտից այդպես քաշվեց ետ
Ու ակնածանքով խոսում է քեզ հետ:
Խոսում է քեզ հետ, բայց մտքում նրա
Գիտե՞ս, չի գրվում ակնարկը վազվա,

Ոչ, դեռ կարող է այնպես պատահել,
Որ ինչ ուզում է՝ վերջապես ասի
Հնչուն տողերում սրտաբուխ երգի.
Նա այդ տողերում քեզ պիտի երգի,
Քո աչքերը բոբբ, որ նմանվում են
Քո իսկ ձեռքերով վառած քուրային:
Զարմացիր, սակայն ես չեմ զարմանում,
Ով որ նայել է սիրուն մուսային,
Նրան հեշտությամբ մտքից չի հանում:

V

Եվ եկան օրեր, օրեր հրաշքի...
Հիշո՞ւմ ես, բայց դա ինչպե՞ս մոռանաս,
Հայոց երկնքում առաջին անգամ
Պիտի գծեր նա՝ արբանյակը մեր,
Իր կորն հաղթական,
Ու դու անհամբեր սպասում էիր
Տեսնելու մտքի թոխը տիտան:
Բայց գուցե ուշ է, խաբել է գուցե
Քո ժամացույցի սլաքն անպիտան,
Նա եկել անցել, չես տեսել նրան.
Գուցե... Բայց ահա Մասիսի կողմից,
Կարծես Մասիս ձյուններից ծնված,
Նա ողջույն տվեց ու միանգամից
Հրածեղան ասաց:
Մինչ դու թունդ առած՝
Նոր էիր թարթում աչքերդ խոհուն,
Նա հողագնդի մյուս կողմն հասած՝
Ուրիշ սրտեր էր այսպես թունդ հանում:
Իսկական հրաշք...
Բայց նա ծնվել է աշխարհի վրա,
Նախ մահկանացու մարդկանց մտքերում,
Եվ հետո, ջահել խառատը վկա,
Շատ սովորական գործարաններում:
Այդ մահկանացու հանճարն ինչքան էլ

Ուղեգրում լույսեր ամբարած լիներ,
Գարձյալ լույս էր պետք, որ նա ողջ գիշեր
Կռանար թղթին, խորհեր առավել:
Ջահել խառատը ինչքան էլ զորեղ,
Յուր չէր գնա առանց հագուատի,
Աշխարհում պիտի ստեղծել ուստի
Ամեն, ամեն բան, և՛ լույս, և՛ շորեր:
Նաև հաստոցներ ստեղծել պիտի,
Որոնցով փոխէ: ձևը երկաթի
Ու դարձնես հարմար
Թե՛ կտոր գործող հաստոցի համար,
Թե՛ արագասահ այս արբանյակի:
Որ սուրաց անցավ թափով շեշտակի
Աշխարհից-աշխարհ:
Սուրաց նրա հետ սիրտը կնդունու.
— Երկաթը, ասաց, երգ ունի հուժկու՝
Մարդու երազը ուղեծիր հանող:
Եվ նա այս անգամ գնաց գործարան:
Դեռ գործարանի շեմը նոր կոխած՝
Գլխի մեջ ահա զարթեցին տողեր
Այն «տեխնիկական» գրքերից պոկված,
Անդիր հիշում էր նա ինչքա՛ն շատ բան:
Ասես ուղեղի ծայրերում մթին
Մի լույս վառեցին:
Այդպես կայծակն է թրթռում պայծառ
Եվ լուսավորում ծալքերն ամպերի,
Հետո որտան է թնդում խուլբար:
Ոչ, անկարող է այլևս խեղդել
Այդ հզոր ձայնը հանուն արվեստի:
Ողջու՛յն, ողջու՛յն ձեզ, իր նոր բնկերներ,
Եկել է ձեզ մոտ՝ սրտում մի մեծ սեր,
Իր սիրտն է այստեղ բերել անվարան:
Ոչինչ, թե մեկ-մեկ հանգ է սրոնում,
Ով որ նայել է սիրուն մուսային,
Նրան հեշտութեամբ մտքիդ շի հանում.
Բայց դուք, այդ ի՞նչ է, նայում եք խոժոռ-

Ջեզնից երկուսը այս ի՞նչ են ասում.
— Էս ո՞վ է, արա, ս՛րտեղից բուսավ,
— Հեքիաթ պատմող է, էդպես են ասում:
— Էլ ինչո՞ւ հապա գործարան եկավ...
— Գիտեր փլավ են մեղ մոտ բաժանում:
— Հա՛, հա՛, հա՛, դե կեր երկաթե փլավ,
Միայն թե զգույշ, փորդ չձակի:
Ծաղրը նրա սուր ակաճջին հասավ,
Խրվեց սրտի մեջ ուժով գնդակի:
Եվ այդ երկուսից ավելի լավ չէր
Նաև զխավոր ինժեները ձեր.
— Մեզ բանվոր է պետք, — ասել էր կժու, —
Ոչ թե տղերքին լեղվի դասատու:
— Բայց, բնկեր Ջաղյան,
Երբ դուք ծնվեցիք, ձեր մայրը բարի
Ձեր ճակատին չէր գրել «ինժեներ»,
Ոչ էլ իմ մայրը ի լուր բուրի.
Ինձ միտել է միայն բանասեր:
Կանցնեն շատ օրեր, տարիներ կանցնեն,
Սակայն այդ վերքը լուռ կմխա՛ դեռ:

VI

Ջյունը չորս անգամ ծածկեց դաշտ ու արա,
Ու ձյունի տակից չորս անգամ ելան
Չնծաղիկները ծիծառով պայծառ:
Բայց ծիծաղի տակ հավերժ բնութեան
Քանի՛ կնճիռներ նոր ավելացան:
Սակայն կնճիռներ ու ճերմակ մազեր
Տարիքը միայն նրանց բերեցին,
Ովքեր իջնում են ձորը ծերութեան:
Խնդունուն միայն հոսանդ տվեցին,
Գետի պես վարար դիտելիք ու փորձ,
Կարծես նրանից ոչինչ չտարան,
Իսկ եթե տարան՝ երգեր գրելու
Չպտղած ջանքերն ու տենչը միայն,

Իսկ եթե տարան՝ ցավը այն վերքի,
Որ թվում էր, թե կանցնեն տարիներ,
Քայց նա իր խորքում լուռ կմխա դեռ:
Ոչ, փակվեց վերքը, այն էլ մի ամսում:
Հիմա նա այնքա՛ն ընկերներ ունի,
Որ սունկի նման աճել են շորս դին,
Ինչպես շուրջն ամեն ծագող տաղանդի:
Իսկ խոսքն այն կծու՝ «լեզվի դասատու»
Հիմա շուրթերին հենց նույն Զազյանի
Դարձել է հաճախ կրկնվող կատակ:
— Է՛հ, իմս հատնեց, լեզվի դասատու,
Գու էլ դժվար թե այդ կարողանաս...
Ու ցույց է տալիս նրան մի հաստոց,
Որ ինքն էր երկնել ամիսներ առաջ:
Ընկած էր փոշում: Ինչ-որ երկու մաս՝
Սրտի՛ մեջ ընկած ինչ-որ զույգ ավազ,
Ամբողջ սիրտն էին տրոփից զրկել:
Եվ ինչպիսի՛ սիրտ, ինչպիսի՛ հաստոց,
Պետք է շուտ փրկել,
Աշխարհում չկա, մարդը չի տեսել
Այդքան ճիշտ տաշող մի գլուխգործոց,
Այդքան ճիշտ հատող մի այլ մեքենա:
— Գե փրկիր տեսնեմ, լեզվի դասատու:
Ու քանի օր է նրա միտքն արթուն
Այն երկու մասի շուրջն է պտտվում:
Եվ գտա՞վ գաղտնիքն ահա վերջապես,
Եթե էլի ոչ՝ ինչո՞ւ է հապա
Գեմքը հրճվանքից այդպես բոցկլտում,
Եթե էլի ոչ՝ ինչո՞ւ է պնդում
Փորձարկել հաստոցն հիմա էլ թեկուզ:

VII

Առաջին մարդը տիեզերք թռավ...
Լսու՞մ եք, մարդիկ, առաջին անգամ
Մարդուն կոչեցին տիեզերագնաց:

Խնդունին ինքն էլ ասես թե առած
Ճախրում է, ճխում իր սրտի խորքից:
Այդ ցնծության մեջ տիեզերական
Նա իր սեփական ցնծությունն ունի.
Մի տաք շշուկ է հասել ականջին,
Թե ինչ-որ դետալ արբանյակ-նավի
Հղկել են իրենց հաստոցով այն նոր,
Լսու՞մ եք, մարդիկ, ինքն էլ մաս ունի
Թոխքում այս մեծ,
Ինքն էլ ջանք թափեց,
Որ աստղերն այսքան մոտիկ թվացող,
Իրականում էլ այսքան մոտ լինեն:
Այն ե՛րբ էր, այն ե՛րբ, որ ընկերներն իր
Խոսքը մեկ արած՝ շշնշում էին,
Թե՛ զուր ես եկել ֆակուլտետը մեր:
Դուք իրավ էիք, բարի ընկերներ,
Եթե նա դարձյալ ձեր կողքին մնար,
Ո՞վ կտար նրան խնդությունն այս մեծ,
Որ ինքն էլ մարդուն ճանապարհ հարթեց:
Ու նա հարբած է, ինչպես պոետը
Առաջին գիրքը տպված տեսնելիս,
Ու պոետի պես
Ինքն աշխարհի հետ, աշխարհն իր հետ է:
Ահա վերստին նոր հանգ է փնտրում.
Ոչ, մի հիշիր դու այստեղ, ընթերցող,
Թե ով նայել է սիրուն մուսային,
Նրան հեշտությամբ մտքից չի հանում:
Այո, գրեց նա մի ոտանավոր
Տիեզերական թոխքի մասին,
Եվ թերթը տպեց տառերով խոշոր,
Բայց խնդունու տեղ զրված էր տակին
Իսկական անունն ու ազգանունը՝
Արշակ Ամիրյան, ինքնուս կոնստրուկտոր:

Տիեզերքի փակ ճամփան էլ բացվեց...

Մարդը կարող է թոթափել հավետ

Կամ դեթ մի օրով բեռը երկրային՝

Սեփական մարմնի ծանրութիւնը քար:

Երկրային բեռը...

Ոչ, ծանրութիւն չէ նա միայն մարմնի.

Ասում են մարդ են նրանք էլ ծնվել—

Կորդն ու բուրժուան, բանկիրը հարուստ,

Արև են սիրում, ծաղիկ ու գարուն:

Ասում են նրանց սիրան էլ է հուզվում,

Երբ որ լսում են քաղցր մեղեդի,

Երկար կանգնում են, մտքի մեջ սուզվում

Նկարների դեմ կախարդ Ռեմբրանդտի:

Ասում են, սակայն ինչպե՞ս հավատաս,

Երբ որ ունեւեր են ձուլում անդադար

Մաղկի, արվեստի, աշխարհի համար:

Եվ ինչպե՞ս, ինչպե՞ս ինքդ էլ շձուլես,

Հենց նրանց համար՝ լորդ ու բանկիրի:

Եվ հիմա քույրերն այն նոր հաստոցի

Մահ են պատրաստում, բայց ոչ հասարակ.

Այլ ատումային:

Երկրային բեռը...

ԽՈՌՎԱՀՈՒՅՋ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

I

Իր շող մատներով նվազեց արփին,

Նվազեց ձմռան ծառերի վրա,

Ու բողբոջները ուրախ բացվեցին,

Զնգաց ամենուր երզը զմրուխտյա:

Ու սառցի վրա արփին նվազեց,

Զրեքի կարկաչն հնչեց օրն ի բուն:

Դարձան ծովերը երգեր ծփծփուն,

Ժեռ ափերի մեջ հնչեցին էլի,

Երկինքը երգեց շող մատների տակ

Իր կապույտ երզը՝ ծիծաղներով լի:

Իր շող մատներով նվազեց արփին

Նաև սիրավառ իմ սրտի վրա,

Ու սրտիս խորքից հնչեց մեղեդին

Սուրբ խաղաղութեան ու սիրո մասին:

Ախ, տեաք, ասի, սև հողի խորքից

Կանաչ հեղեղն է հորդել երգի պես,

Արտուտն է զվարթ սուզվել կապույտում,

Անտես զանդակ է, կախված երկնքից,

Զնգում է բարձր, կանչում սրտաբաց.

«Դարո՞ւն է, դարո՞ւն, և ի՞նչ թարմութիւն»:

Կարծես թե կյանքը նոր է սկսվում...

Բայց ծիլ ու ծաղկին՝ հենց ելան հողից

Ճառագայթները իջան ատումի,

Եվ նրանց անմեղ, զուլալ աչքերից
Նայում է մթին ատոմախտն հիմի,
Ծովի ջինջ երգին իր սեն է խառնում,
Երկնքից, գետնից, քո իսկ հագուստից
Անտես ու անձայն քո դեմ է հառնում
Եվ օրըստօրե, վայրկյան առ վայրկյան
Մի քիչ ավելի կյանքիդ սպառնում:
Այդ հիմա, իսկ երբ ուամբերը պայթեն
Մեր գլխի վրա, մեր աչքերի դեմ...
Երենկ քեզ, արտուտ, որ դու զվարթուն
Գարուն ես երգում՝ սուզված կապույտում,
Այնպես ուրախ է երգըդ զողանջում:

II

Եվ աս ուզեցի իմ երգը հյուսել,
Բայց ինչպե՞ս արդյոք, ինչի՞ց սկսել,
Որ դուք իմանաք որքան եմ ուզում
Յնժա ինժեններն այն բանի համար,
Որ նոր տեսակի պոմպ է ստեղծել,
Նայի այգեպանն ամեն առավոտ,
Թե դեղձ ու խաղողն ինչքան են հասել,
Վարորդ ունենա ջրցան մեքենան,
Փողոցի ծառերն ամեն օր ջրի,
Այս տրամվայր՝ զնգոցով անցնի,
Այս մանկան կանչը սրտեր լեփ-լցնի...
Ո՞ր մեկից արդյոք իմ երգն սկսեմ:

III

Ու խոհերով լի քայլում եմ այսպես
Վաղ զարնան միջով, իմ բնկերոջ հետ,
Ես հանգ եմ փնտրում, նա՛ գուշներ պես-պես:
Նա էլ ինձ նման զարուն է սիրում,
Ինձ պես օրհներգում արևն ապրիլյան,
Մի բացված բողբոջ, հովի մի սոսափ,

Հավքի մի դայլայլ հուզում են նրան:
— Տես,— ասում է ինձ,—
Կյանքն է ծիծաղում կույս բողբոջներից,
Որ պայթել են լուռ ու դարձել ահա
Վառ կանաչ պուտեր ծառերի վրա:
Դեռ բողբոջներն այս տերև պիտ դառնան,
Խենթով քամու հետ համբուրվեն անհագ,
Ու քամին, նայիր, ճամփեքով զարնան
Նրանց է գալիս կարոտով վառման,
Էլ չհիշելով, որ փոքր են նրանք,
Գալի՛ս է՝ սիրուց դարձած այնպես տաք...
Իսկ արևն հասար, արևն ապրիլյան,
Ուզում եմ բացել կուրծքս նրա դեմ,
Որ մոտիկ լինեն գոնե մի վայրկյան,
Իմ սիրտը և նա,
Մեկտեղ տրոփեն, այրվեն ու չզգան,
Որ իրենց միջև պաղ հագուստներ կան:
Ու կկոցում է աչքերն իր շաղված,
Որ ասես միայն արևը տեսնի,
Ուշքը շտանեն ուրիշ պատկերներ,
Իսկ այդ արևը աղջիկ է հուրհուր,
Ասես կցնդի տեսիլքը հանկարծ,
Էլ ինչպե՞ս պիտի և ու՞մ գանգատվի,
Որ իրենց միջև պաղ հագուստներ կան:
Ոչ, իմ բարեկամ, ինձնից չես պահի,
Ես էլ եմ եղել քսան տարեկան:
— Արմեն, նա թո՛ւլս է, թե՛ ձյուն սպիտակ:
— Նա-ն ո՞վ է, ի՞նչ նա:
— Դե նա, որ հիմա երգ է կրծքիդ տակ,
Այս ծաղկից, գետից, այս քար ու թփից
Եվ սրտիդ խորքից նրան ես լսում:
Շիկնում է Արմենն ինչպես մի լուսայգ,
Որ անկարող է այլևս պահել
Ծագող արևը իր ամպերի տակ:

IV

Յաժում քաղաքն է ծանր ու ձուլածո,
 Շարք-շարք նստել են շենքերը հողին,
 Յաժում անտառն է գործարանների,
 Որոնց աղմուկին դեռ չեն սովորել
 Նուրբ ականջները ծիծեռնակների,
 Եվ նրանք ահա աջատեղ են թռել,
 Խառնել ծլվլոցն իրենց հրճվալից
 Երեխաների ուրախ կանչերին:
 Իսկ մեկն էլ ահա իր բույնն է հյուսել
 Արմենի փոքրիկ արվեստանոցում:
 Հայացքս մի պահ ցած է թեւածում
 Եվ շենքերի մեջ այն շենքը փնտրում,
 Որտեղ բացվել է մի ցուցահանդես,
 Որ իմ ընկերոջ անունն է կրում:
 Այստեղից իջան այլ ծիծեռնակներ,
 Որ մեծ գարուն են նրան ավետում:
 Չէ, իմ թռչուններ, այլ է ուրին մեր,
 Մենք այս լուռ ափից քաղաք ենք ձգտում.
 Թե մարդ լինեիր՝ կհասկանայիք,
 Թե նա ինչու է այդքան խոր հուզվում,
 Երբ որ կարգում է մարդկանց հայացքում
 Ու կարծիքների լղարիկ գրքում,
 Որ ինքն արվեստում աստղ է նորածագ:
 — Ահա իմ սերը, — ու ետ է տանում
 Սպիտակ թուղթը նա իր նկարից՝
 Բացելով միայն կեսը կտավի.
 Մի լույս-աղջիկ է պայծառ ժպտում ինձ,
 Ահ, քիչ է պակաս մարդն հրեշտակից...

V

Նորից ձնհալի ջրերն են իջնում,
 Գլզում, իջնում բարձրիկ սարերից,
 Բանաստեղծական հնչուն տողի պես

Երկնում կոունկի երամն է զնգում:
 Անցած աշունքվա տերևն է ընկնում,
 Բայց ոչ թե քամուց, այլ այն նոր ուժից,
 Որ մայր ծառերն են արդ գործադրում
 Տեղ տալու համար
 Իրենց մայրության նոր պտուղներին:
 Նայում եմ, նայում ես այս նկարին,
 Ոչ, չկան այստեղ ջրեր. գլզան,
 Ոչ էլ մայր ծառեր ու կոունկներ կան.
 Մի խոր երկինք է վերում ծովացած,
 Ի՞նչ թարմ գույներ են, ի՞նչ լուսե կապույտ,
 Թվում է պիտի արծիվը անփուլթ
 Իր թևը քսի ու կապույտ ներկվի:
 Թվում է, պիտի ինքն իրեն երգվի
 Այս ջինջ կապույտը այս գույզի վերն.
 Մեկն իմ ընկերն է, մյուսն՝ աղջիկն այս,
 Սիրվարդ է անունն ու ինքն էլ սիրվարդ:
 Մի շոգ ամառ է այս նկարի մեջ,
 Բայց ես ձնհալի ջրերն եմ տեսնում.
 Արդյոք նրանի՞ց, որ սերն է այստեղ
 Ինքնաբուխ հորդում հեղեղի նման.
 Արդյոք նրանի՞ց, որ դու, իմ ուղեղ,
 Այսօր լցված ես շնչով վաղ զարնան,
 Ու քեզ թվում է նոր է սկսվում
 Կյանքը հինավուրց մեր մոլորակում:
 Արև է շուրջս, նկարում՝ նույնպես,
 Օ, այս արևն է կյանքը նորոգում:
 Մարդիկ, արևին հավերժ կենարար
 Եթե պետք լինի մի երկրորդ անուն,
 Դուք հազադություն անունով կնքեք,
 Ուրիշ ոչ մի բան այդպես չի սաղի,
 Ուրիշ ոչ մի բան ակունք չի լինի
 Արևի նման, կյանքի, երազի:
 Մովերը նետեք զենքերը մահվան,
 Բավ է խոռվեն մեր բունը նրանք,
 Նետեք ծովերը, մի երկու վայրկյան

Մեր տեղ թող ձկներն անհանգստանան,
Կամ խոփեր դարձրեք, մահվան տեղ կյանք տան:
Արդոք այստեղից չսկսե՞մ երգս
Սուրբ խաղաղության ու սիրո մասին:

VI

Սե՛րը: Քանի՛ սը այսպես ժպտացին,
Թեանցուկ արած քայլեցին այսպես.
Այդ սերը ծնեց մեծ Հոմերոսին
Ու ծնեց Ներոն:
Այդ սերը ծնեց և՛ այն «Տերոսին»,
Որ սպառնում է ատոմամահով,
Ե՛վ ընկերոջն իմ, որ իր վրձինով
Նրգում է սերը,
Եվ լավ է ներգում, որ իմ խոհերը
Այսպես վարարել և ելք են ուզում:
Հիմա եկել է իրեն է հասել
Այդ անմեռ սերը՝ սերունդներ ծնող:
Նա Սիրվարդի հետ քայլում է թեթև
Արձակ դաշտի մեջ, հայացքը հեռուն,
Սիրո պահապան արծիվն է ճախրում
Նրանց սրտի մեջ ու զլխի վերև:
Ասես ամեն ինչ այստեղ ունի թև
Ե՛վ սիրող զույգը, և՛ այս դաշտն անգամ,
Որ շատ է հոգնել վարվել-ցանվելուց
Եվ նմանվել է հիմա կամենում
Սիրո հեքիաթի թևավոր գորգին:
Բայց ախր... չեն էլ ասել իրարու.
Որ ներջանիկ են սիրելով միմյանց.
Իմ ընկերն ահա հենց նոր շշնջաց,
Որ ինքն այդ մասին չի էլ ասելու:
Պետք է ավարտի իր կտավը այս,
Որը կհնչի այնժամ աշխարհում
Ձրպես իր սիրո խոստովանություն:
Իսկ եթե մերժի՞ Սիրվարդը նրան.

Ախ, իմ բարեկամ, չգիտես դու դեռ,
Որ ծիծաղում է մի աչքը սիրո,
Մյուսը թափում է արցունքի գետեր:
Եթե քեզ նայեց արցունքոտ աչքով,
Մի՞թե կպատռես այս կտավը դու:
Բայց ինչու՞ ծնվեց կասկածն իմ սրտում,
Ախրը նա ինչու՞ չպետք է սիրի.
Շատ կան տղաներ այսքան գեղեցիկ,
Այսքան ձիրքառատ տղաներ շատ կան,
Եվ այսպես խորունկ սիրող հոգիներ:
Սակայն ով ասես չի մերժվել սիրուց,
Նույնիսկ Արմենից կատարյալները.
— Լսիր, սիրելիս, ետ տար՝ թղթերը,
Պետք չէ, մի ծածկիր՝ կտավդ այսպես,
Մի կեսն ինձ դյուրեց, ցույց տուր մյուս կեսն էլ.
Ուզում եմ գործդ ես լրիվ տեսնել:

VII

Արվեստանոցը մթնել է ասես,
Սև է լռությունն այստեղ ծվարած:
Ծիծեռնակները վերը բուն դրած
Ինչու լռեցին, էլ չեն ծլվլում,
Նրա՛նք էլ գիտեն, որ օձն է պառկած,
Գլուխը դրած սև հողին խարկած՝
Արևի լույսն է կլանում ազա՛հ,
Թե մի բան անում՝ լուկ այն երևի,
Որ թույնի փոխի շողն իսկ արևի:
Եվ ստեղծողը այս պատկերների
Ծանր ասում է՝ մատն օձին մեկնած.
— Երբ մեզ նկատի՛ սողեսող կգա
Ու երջանկության կանա՛ ճամփեթին
Կխայթի մեր սերն ու մեզ թիկունքից:
Ախ, կյանքում այդպես մարդկանց թիկունքում
Պատերազմը միշտ թույն է հազարում,
Քո գործ ես անում, քո սերը սիրում,

Ու մեկ էլ ահա թիկունքից հարված...
Գոգում են բարակ շուրթերը նրա,
Բայց նա զայրույթը խեղդել է ուզում:
— Իմ այս կտավը ո՞նց է, չի՞ հուզում,
Թեև կիսատ է, բայց քո խոսքն ասա:
Ու ես ասում եմ, իսկ նա ժպտալով՝
Մի քիչ, ասում է, դարձրիր պլակատ,
Իսկ ես կուզեի, որ Էի՛րտը խոսեր,
Եվ ոչ թե միտքը մտքին բան ասեր,
Մի՛րտը խոսք բացեր,
Մի՛րտը կոչ աներ,
Մի՛րտը թրթռար ուրիշ սրտի մեջ:
Ասա, քո սրտում
Ինչ որ մի թաքուն ուժ չի՞ խլրտում:
— Այո: Ուզում եմ ստեղծագործել
Հանուն վսեմի և խաղաղության:
Եվ այդ օրվա՞նից ես սկսեցի
Այս երգը հյուսել
Եվ կենսագիրը դառնալ մի հոգու,
Որ ինձնից առաջ ու խորն է ուզել
Նայի այդեպանն ամեն առավոտ,
Թե դեղձ ու խաղողն ինչքան են հասել,
Յնժա ինժեներն այն բանի համար,
Որ նոր տեսակի պոմպ է ստեղծել,
Վարորդ ունենա ջրցան մեքենան,
Փողոցի ծառերն ամեն օր ջրի...

VIII

Նա եկավ ինձ մոտ գունատ ու մռայլ,
Աչքերում վշտի երկու սև երկինք.
Մերժել էր Սիրվարդն, ու նա մի բերան
Լոկ այն էր ասում, որ իր սիրելին
Վառվռան կյանք է, բայց ոչ իր համար,
Իրական կին է, իր համար՝ նկար:

— Բախտ, մի՞թե կյանքում քիչ կային վշտեր,
Սիրուց նվաղած աչքեր արցունքոտ,
Ինչո՞ւ ինձ տարար այն աղջկա մոտ,
Որ իր սերն ուներ,
Քո ինչի՞ն են պետք այսքան արցունքներ:
— Նա իմ արվեստն էր, ոչ թե ինձ սիրում:
Իսկ ինձ թվում էր, թե իմն է արդեն:
Գնաց... ինձ թողեց մենակ ու գնաց,
Թեկուզ և նրան թեանցուկ շարած... —
Ու այսպես անվերջ իր սերն էր լալիս,
Իսկ ես իմ սրտում հարց էի տալիս,
Թե տեսնես պիտի նկարն ավարտի՞...

IX

Անցան շաբաթներ, ծառերից ընկան
Ճերմակ, վարդագույն ծաղիկներն ամեն,
Ճերմակ, վարդագույն բոցերն հանգեցին,
Մնաց կանաչը վառված խենթորեն:
Հասել է թուփը, կանչում է արդեն,
Որ գան ու թափ տան ծառերից իրեն,
Ճաշակեն, զգան,
Որ քաղցրություն է ամբարել միայն,
Կյանքում չի եղել տատասկի նման:
Քամին է դալիս, քամին շարացած
Ու թափում թուփը, հողերին խառնում,
Այն էլ ամենից լավերը հասուն,
Թողնես՝ ոչ մի հատ չի պահի մարդուն:
Բայց մարդը ահա ծառն է բարձրանում,
Թափ տալիս բարիքն ու բերում է տուն,
Շատ հաջողակ է նա այս գործերում:
Իսկ մարդը ահա... կքել վշտի տակ
Ու իր կտավը էլ չի նկարում...
Մերթ ահեղ ու մերթ շշուռի նման
Թերթերը նոր-նոր լուրեր են բերում,
Նոր են արտաբուստ, բայց խորքում իրենց

Արդեն զառամյալ դարձած հնություն.
Այսինչն ու այնինչն արին շնություն,
Իրենց երկիրն ու խիղճը ծախեցին,
Այսինչի ձեռքով աշխարհի վրա
Կովի ամպերը նորից կախվեցին,
Այսինչի կամքով նոսրացան մի քիչ
Եվ կայծակ չեն տա մոտ ապագայում,
Այսինչ քաղաքում կոնգրես գումարվեց,
Կամ հանդիպեցին մեծերը այսինչ,
Բայց կովի կիրքը էլի չմարեց.
Այսինչն սկսեց փորձարկումն էլի,
Եվ ատոմախտը, անտես ու անձայն,
Մարդիկ, բռնում է արդեն ձեր բկից:
Շատ են գազազիլ լորդն ու բուրժուան
Չեն ուզում ապրել իբրև հաշտ դրկից...
Նոր լուրերն այսպես գալիս են անվերջ,
Նոր են արտաքուստ, բայց խորքում իրենց
Արդեն զառամյալ դարձած հնություն,
Սահայն այնպիսին, որից չի պրծնում
Մեր մոլորակը, ինչպես քաղցկեղից:
Ի՞նչ, պատյա՞ն մտնել, երբ որ այս պահին
Թե հազար շենքի հիմքեր դրվեցին,
Հազար ումբեր էլ ձուլվեցին իսկույն,
Որ քանդեն դրանք
Ողջն հիմնահատակ,—
Չէ, իմ բարեկամ, պիտի ավարտես
Այս քո կտավը վերջնականապես,
Վրձնի մի երկու տաք հարված—և վե՛րջ:
— Բայց կյանքում ե՛ս չեմ Սիրվարդի կողքին—
— Մեկ է, ավարտիր: Գեթ նկարի մեջ
Քայլիր նրա հետ երջանիկ այսպես:
— Չեմ կարող ստել:
— Եթե այդպես է, ջնջիր ինքդ քեզ,
Ինչպես կյանքում է, և ձեռքով ուժեղ
Քո տեղ նկարիր նրա ընտրածին:
Բայց հառաչելով ասում է նա ինձ.

— Չեմ կարող. մարդ եմ, աստված չեմ ծնվել,
Եվ փոքր մարդ եմ, կեղծել չեմ ուզում,
Այստեղ, կրճքի տակ, մի բան է ետում,
Մի տա, գոչում է, եթե ծարավ ես,
Մի տա քո ձեռքով քո ջուրն ուրիշին,
Թեկուզ ջուր չէ այն,
Այլ միրած միայն,
Լոկ արտացույված քո անապատում,
Բայց քո, լսո՞ւմ ես, քո՛ անապատում:
...Ես հույսս կտրած՝ չեմ շարունակում,
Պետք չէր, ախ, իզուր նրան ընտրեցի,
Նա շատ հարմար էր ուրիշ մի գործի՝
Սիրային վեպի հերոս էր տրտում...

X

Արևն ուրախ ծիծաղում է: Բայց ո՞ւմ վրա,
Ո՞վ է, տեսնես, մի բան անում հիմարավուն:
Չէ, արևը շատ չի սիրում զվարճանալ,
Ծիծաղում է նրա համար,
Որ բոլորին կարող է տալ
Շող ու ժպիտ ու ջերմություն,
Լույս ու բերկրանք ու սեր հորդուն...
Նրանից է այդպես խնդում,
Որ այս մամիկն ահա անցավ թոռնիկի հետ,
Քարի տակից գլուխն հանեց այս ծիլը սուրբ,
Այս աղջիկը հագավ մի նոր շրջադուստ,
Սոսնկը պատռեց հողի կուրծքը և ելավ դուր:
Այս դժոլը և այս գոտնան...
Բայց սպասիր, մի՛ ծիծաղիր, բարի արև,
Հարսը այս նոր հարսանիքի... Սիրվարդն է, տես,
Ճանաչեցի կտավից ես:
Նույն աչքերն են, միայն լցված խնդրությամբ այլ,
Նույն մազերն են, բայց ավելի կոկիկ սանրած,
Նույն ոտքերը, որոնց դիմաց շողն է անփայլ,
Նույն գլուխը, որ պիտ դրվի ուրիշ բարձի,

Լոկ զգեստն է, որ նույնը չէ,
Նկարի մեջ բաց կապույտ է, այստեղ՝ ճերմակ...
Ախ, սպասիր, մի՛ ծիծաղիր, բարի արև,
Իմ ընկերը հիմա անցնում է գլխահակ:
Ծանր, ինչպես մառախուղը, գնում է նա,
Սիրտը լիքն է արցունքներով, բայց չի լալիս,
Որ ամպի պես թեթևանա,
Չի որոտում, կայծակ տալիս,
Որ ինքն իրեն ծվատի ու հանգստանա...
Մի՛ ծիծաղիր, դու շար արև,
Գուցե ամպ է, և... էլ չկա կտավը իր:
Ա՛հ, ասում էր, թե Սիրվարդը բաժանվելիս
Թևը չընկավ այս տղայի,
Ուրեմն ի՞նչ, դեռ չէր մարել իր հույսը նա,
Որ կունենա դեռ իրավունք
Նկարի մեջ Սիրվարդի հետ զբոսնելու
Եվ դրան էր սպասում լուռ:
Հիմա հանգավ հույսը վերջին,
Պետք է փրկել գեթ կտավը ծվատվելուց:
Բայց ո՞նց գնաս, գուցե չի էլ նա իմացել,
Իսկ դու հանկարծ կարող ես մի հառաչանքով,
Մի «հարսանիք» կամ «գիմացիր» անմիտ խոսքով
Նրա հույսը անդարձ մարել:

XI

Առավոտն ուրախ զրնգաց կրկին,
Ինչպես որ երեկ
Կամ միլիոն տարի սրտանից առաջ,
Բայց իմ սրտի մեջ իջավ մի գիշեր
Չար ու ծանրագին,
Ու կուրծքս ճնշեց մի զսպված հառաչ:
Իմ դեմ է ահա կտավն Արմենի
Ախ, էլ ի՞նչ կտավ,
Ասես թե օձը այստեղ նկարված
Մի երկու վայրկյան շունչ առել հանկարծ

Ու դրոշմել է կտավի վրա
Հետքերը իր սև ու քստմենի,
Եկել իր տեղը պառկել է էլի:
Ու սևի տակից Սիրվարդն է նայում,
Մի հոնք է կամար,
Այտից մի պատառ,
Մի մատ է ձեռքից,
Կրունկից մի մաս:
Սիրտ իմ, էլ ի՞նչ, ասա, էլ ի՞նչ էիր ուզում,
Գու՞ր գիտեիր, զգում էիր քո մեջ թաքուն,
Որ այսպիսի մի խոր հուզում,
Եվ կտավն իր նա կջնջի:
Գու՞ր գիտեիր, զգում էիր, բայց չհասար...
Հապա լորդը և բուրժուան,
Չէ՞ նրանք էլ Սիրվարդ ունեն, թե ինչպիսի՞,
Կարդա Մարքսի «Կապիտալ»-ում,
Եվ կիմանաս, որ երբեք չի օձը ննջի,
Կբարձրանա, որ աշխարհը... սեռով ջնջի:
Իսկ աշխարհը այդ իմանա և սպասի՞,
Բայց սպասի ակաբը ինչի՞,
Որ սխալն իր զգա ժամին լոկ օրհասի՞,
Երբ որ ջնջվի այս մի փոքրիկ կտավի պես:
Ծանր է ինչպես, ես տեսնում եմ ահազարհուր
Այս քաղաքում միայն մի բան մնաց շարժվող՝
Այս գետակը, այն էլ լո՞ւր, պապանձվեր թող,
Ու շպատմեր այն շինարար մարդկանց մասին,
Որ քարերի տակ մնացին:
Խելք ունեին, սակայն, ավա՞ղ, ոչ այն խելքից՝
Որ կառուցածն ատոմային մահից փրկեր,
Ձեռք ունեին, սակայն, ավա՞ղ, ոչ այն ձեռքից,
Որ պատերազմ սկսողի գլխին իջներ:
Մի այլ տեղում ո՞նց են պարում խելագարված,
Սրտերը մոլթ, մտքերն անկապ ու խաթարված:
Շատ չեն պարի ու քրքջա,
Թե որ հանկարծ վիճեր չընկնեն իրենց բախտից,
Ու՞ր կփախչեն ատոմախտից:

Այնտեղ ա՛հա ուրավականներ եմ նկատում,
Բոնվեւ եւն այդ կապտաշուրթ հիվանդութեամբ,
Պիտի մեռնեն արագ, ինչպէս շար հեքիաթում,
Ու նոր մարդիկ աշխարհ չզան,
Իսկ եթե գան՝ հիվանդ, անուժ, տկար այնքան,
Որ աշխարհը թվա նրանց լոկ գերեզման:
Պիտի մեռնեն... Ախրը ուր էլ ոտք ես դնում՝
Թակարդներ կան ատոմային,
Որ դիպվածով ճառագայթներ են անվանվում.
Թե ջուր խմես, ցաւ ես խմում անբուժելի,
Թե շիմես՝ ծարավից էլ մարդ է մեռնում.
Թե օդ շնչես՝ օդը մահովան շնչով է լի,
Իսկ առանց օդ ինչպէ՞ս կապրես.
Նախնիներիդ օրինակով թե բույս ուտես,
Բույսերի մեջ մահն է աճում սնունդի տեղ...
... Սիրտ իմ, էլ ի՞նչ, ասա, էլ ի՞նչ էիր ուզում,
Դժգոհ էիր, որ շատ հարմար չէր Արմենը
Խաղաղութեան երգի համար,
Խաղաղութեան երգ է իրավ այս ամենը:
Եթե ջնջես նա իր գործը— դո՛ւ շահեցիր,
Դե, ուրեմն, ուրախացիր...
Բայց դու ինչպէ՞ս ուրախանաս,
Թե գտար մի ցորենհատիկ՝ արտը կորցրիր,
Քո դեմ ելան պատկերներն այս:

XII

— Տես, հաղթ շենքերը կանգուն են նորից,
Իրենց բազմազան հատկանիշներից
Մեզ չեն ծառայել լոկ շունեցածով՝
Գերեզմանի քար դառնալով միայն:—
Ասում է Արմենն ու ես սթափված,
Կարծես թե նոր եմ նկատում նրան:
Կուպերն ուռած են, պարզ է, չի քնել
Եվ ամբողջ գիշեր այն է մտորել,
Ինչ որ ես հիմա:

— Չեկար: Չհասար: Ես կործանեցի:
Օ, ինչ ուժեղ է եսը մարդու մեջ:
Հեշտ չէր, ողջ գիշեր իմ դեմ կովեցի
Եվ իմ տեղ պիտի նկարեմ նրան.
Նույնը կլինի՞ մի երկինք անբիծ,
Կապույտում ճախրող սեղ արծիվը այն,
Թե խաղաղութունն հսկեք արծիվաբար:
Լուսե Սիրվարդը կլինի՞ նորից,
Հիմա ուրիշին թեանցուկ արած:
Լոկ ես չեմ լինի,
Մեկ էլ այն օձը չի լինի պառկած.
Պիտի նկարեմ թռչչի պահին,
Իբրև սև շանթի՞ սև հողից ծնված.
Պառկած չէ կյանքում մարդու թշնամին...
Եվ նա ձգում է մի ուրիշ կտավ
Ու սկսում է ամեն ինչ նորից,
Բայց մի կտավ չէ աշխարհը այս հին.
Ջնջեցին՝ հեշտ չէ սկսել կրկին:
Իսկ աշխարհն այս հին այն է, որ տեսնես՝
Յնձա ինժեներն այն բանի համար,
Որ նոր տեսակի պոմպ է ստեղծել,
Նայի այդպայան ամեն առավոտ,
Թե դեղձ ու խաղողն ինչքան են հասել,
Վարորդ ունենա ջրցան մեքենան,
Փողոցի ծառերն ամեն օր ջրի,
Այս տրամվայը զնգոցով անցնի,
Այս մանկան կանչը սրտեր լեփ-լցնի...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դյուցազնական	3
Վերադարձ	11
Խոովահույզ խաղաղության	25

Վաչագան Լեոնի Վարդանյան

Խոովահույզ խաղաղություն

Խմբագիր՝ Մ. Գ. Սարգսյան, գեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան,
Նկարիչ՝ Ա. Զաֆարյան, տեխ. խմբագիր՝ Օն. Փանիկյան
Վերատպագրող սրբագրիչ՝ Հ. Վարդանյան

ՎՅ 10526

Պատվեր 159

Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության՝ 7/1—1963 թ.:

Ստորագրված է տպագրության 22/III—1963 թ.:

Քուղի՝ 84 × 108¹/₃₂, հրատ. 1,8 մամ., տպ. 2,5 մամ. = 2,05 պայմ. մամ.:
Գինը՝ 10 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ
արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան,
Ալավերդյան փող. № 65: